

Ձևչող ծրագիր

Կարենը համակարգչային էքսպերտ է: Նա առաջադրանք է ստացել ստեղծել տվյալները ջնջող ծրագրային ապահովում: Շատ կարևոր է, որ տվյալներն այնպես ջնջվեն, որ հետո հնարավոր չլինի դրանք վերականգնել: Համացանցում համապատասխան ծրագիր չգտնելով Կարենը ինքը գրեց ծրագիրը: Ծրագրի ինտերֆեյսը պարզ է. այն հարցնում է ջնջվող ֆայլի անունը և մի ո թիվ, որը ցույց է տալիս, թե տվյալները ջնջելու գործողությունը քանի անգամ է պետք կատարել: Այդ թիվը պատկանում է 1-ից (արագ ջնջում) 20 (մաքսիմում ապահովություն) տիրույթին: Կարենի ծրագիրը անցնում է ֆայլի վրայով բայթ առ բայթ և յուրաքանչյուր 0 բիթը դարձնում է 1, իսկ 1-ը դարձնում է 0:

Կարենը դիմել է ձեզ որպես անկախ թեստավորողի: Դուք պետք է գրեք ծրագիր, որը ստուգում է Կարենի գրած ծրագրի աշխատանքը:

Մուտք

Առաջին տողում տրված է մի $1 \leq N \leq 20$ ամբողջ թիվ: Հաջորդ երկու տողերը բաղկացած են 0-ներից և 1-երից: Դրանցից առաջինը ներկայացնում է ֆայլի բիթերը ջնջելու պրոցեսը սկսելուց առաջ, իսկ երկրորդը՝ այդ պրոցեսն ավարտելուց հետո: Այդ երկու տողերի երկարություններն իրար հավասար են և չեն գերազանցում 1000-ը:

Ելք

Ելքում պետք է արտածել “Deletion succeeded” արտահայտությունը, եթե բիթերից յուրաքանչյուրը N անգամ փոխվել է, ինչպես նախատեսված է Կարենի ծրագրում: Հակառակ դեպքում պետք է արտածել “Deletion failed” արտահայտությունը:

Օրինակներ

Input:

1

```
10001110101000001111010100001110
01110001010111110000101011110001
```

Output:

Deletion succeeded

Input:

20

```
0001100011001010
0001000011000100
```

Output:

Deletion failed